

Այսպէս՝ Յովհաննէս Թիւթիւնճի ձեռք կը բերէ նուիրակութեան պաշտօն, սակայն յայտնի չէ, թէ 1652—1662 տարը տարուան շրջանին ինչ ըրած է և ո՛ւր շրջած։ Միայն երեմիա Չէլէպիի Օրագրութեան մէջ (տես էջ 55, 56, 57 և 81) 1654—1655 թուականներուն կը յիշատակուի «Տէր Յովհաննէս էջմիածնի» անունով անձ մը, որ 1654 Յուլիս—Սեպտեմբերին Պուլիս կը գտնուի, օրուան դէպքերուն կը խառնուի և ժամանակակից անձերու հետ շփումներ կ'ունենայ։

1654 Սեպտ. 6ին երեմիա Չէլէպի կը գրէ. «էջմիածնայ Տէր Յովաննէսն գնաց», առանց ըսելու թէ ո՛ւր գնաց. իսկ 1655ին կը հաւաստէ, թէ Թոգասէն Պուլիս դարձած է, լսելով Փիլիպպոս կաթողիկոսին մահը, որ տեղի ունեցած է 1655 Մարտ 25ին։

Կարելի է ենթադրել, որ այս էջմիածնի Տէր Յովհաննէսը ինքն է, և այս կոչումը ստացած է էջմիածնի նուիրակի իր հանգամանքէն. սակայն ասիկա շատ հաւաստի չէ, վասնչի ուրիշ ժամանակակից Յովհաննէս վրդ.ներ շատ կան(1)։

(1) Առնցմէ մէկն էր Մուղնեցի Յովհաննէս Փիլիպպոս կաթ. էջմիածինէն հետք բերած էր զայն եւ Կ.Պոլսոյ պատրիարք Գեանուկա՛մ։ Մուղնեցի Թագա՛սէն չէր կրնար գալ, քանի որ արդէն Պոլիս էր իբր պատրիարք։ Կար նաեւ էջմիածնի միաբան եւ նոյնպէս Փիլիպպոս կաթողիկոսին հետ Պոլիս եկած Յովհաննէս վրդ. Արդնցին, զոր 1653 Նոյեմբեր ծին Փիլիպպոս Պոլիսէն Լեւոստան դրկած էր իբր նուիրակ եւ խաղաղարար (սեւ Ալիւան, «Կամենից», էջ 250—253 եւ էջ 190 Մուսպահուած Աւեսարանի մը յիշատակարանը), որ նոյնպէս 1655ին Թոգաս չէր կրնար զտնուիլ անկէ Պոլիս գալու համար։

Կը յիշուի նաեւ 1651—53 Փիլիպպոսի հետեւորդներուն մէջ Յովհան վրդ. Երեւանցի մը, որ Երեմիա Չէլէպի Մեծ Յովհան վրդ. կոչումով կը յիշատակէ։ Կարգ մը պատճառներով՝ ասիկա ալ 1655ին Թոգաս չէր կրնար զտնուիլ։